56. ԽՂՃՄԸՏԱՆՔԱՎ ԿՅՈՂԸ

Լսում ա՝ մին մարթ ա ինում։ Էս մարթը հինչ փեշակի, վըեր քյինամ ա, կարում չի, թա սվերի։ Վերչը կյամ ա ըստծու տոռը, ասում ա. «Ա՛յ աստված, ախր ես հունց ա՞նիմ, հինչ փիշակու վրեր քյինամ ըմ, կարում չըմ, թա սվերիմ։ Պա տու աստուծ ըս, հի՞նչ պևնու կլխու ըս տնում»։

Աստուծն ասում ա. «Քյինա ծեր տանն ըռաչ էին մին քանի փոս բանդի, ամեն մին փոսում մին քանի հատ ցորեն քըցի, ամեն մին փոսու էլ մին փիշակու անուն տու դուլգյարություն, նըրկարարություն, ռանչպարություն, մինի անունն էլ տիր կյղոթուն, տե՛ս, էտ ցորեններին վրերը լոխճա շուտ ծիլից, էն փիշակեն էլ քյինա։ Էն էլ ասիմ,—ասում ա աստված,—թա վրեր պեն ա, պտահմունք ա, կյղոթունեն փոսին ցորենը լոխճա շուտ ծիլից, տե՛ս, ինձանա քյոզ ամանաթ[1] ինստիավ[2] կյղոթուն կտնիս։

Էս մարթը իսի էլ անում ա։ Մին քանի վախտանը ետը կյամ ա տրեսնում, վրեր լոխճա ճելլի էն փոսին ցորենն ա ծիլալ. վրերին անումը տիրալ տ կյղոթուն։ Էս մարթը ըսկսում ա կյղոթուն անել։ «Հինչ ա՞նիմ, ինձ էլ աստուծ է՛ս փեշակը տվավ»,—ասում ա էս մարթը ու հղև ընկնում։

Կյամ ա տրեսնում մին կուչ. ասում ա. «Էս լավ իլավ, էս ա էս կուվը կկյուղանամ»։

Կուվը առաչն ա տնում, թա պիրի, ինքյը-ինքյը մետք ա անում,

---

1 Խրատ. խորհուրդ։

2 Հղմով։

թա. «Պա մեղքը չի, կովը տանիմ, գանան թողնիմ պոընչիլիս»։ Կովը թող ա անում տեղը, տերտակ կյամ տոն։

Էս մարթը ամեն քիշեր կյղոթունու վա տուս կյամ, ամեն դոնում էլ մետք ա անում, մետք, տերտակ կյամ տոն։ Օզում ա, թա կյղոթունը թորա անե, ամա կարում չի ըստծու խոսքան տուս կյա։ Մնացալ ա իստի կրակու մաշ ընկած։

Վերչը շատ մետք ա անում, վերչը վճիռ ա անում, եր կենում, թուշ քյինամ ղաչաղներեն նհետ թա հընգեր տեռնա, ղըլղրոթուն անե։

Ղըչըղնեն սուվթա օղում ըն, թա ըսպանին էս մարթին, հվատում չրն, ամմա վրեր ետը հետը տրեսնում ըն, վրեր էս մարթը դուղ սրտավ ա օղում ուրանց նհետ հընգեր տեռնա, եր ըն օնում, հընգեր չինում։ Քըշերը քոն ըն ինում, ռութանան եր կենում, քյինամ մին հղե կտրում։ Եշում ըն տրեսնում, էսա մին բանե խոչա օխտը ճորե ճոթ-կտորավ պեռնած կյամ ըն։ Ղրչըդնին ըորչնին կտրում ըն, խուչոցը ծեռքերնին կպոտում, առաչն անում, տանում լափ ծմակին խորքը, ուրանց բինան։ Ճորուցը պեռները վեր ըն պիրում, ծեռքերնին կըպոտած խոչաներեն տամ էս թազա եկած հընգերին, թա տար էտ ծորումը կտորե։ Էս թազա հընդերը խուչոցը առաչն ըրած տնելիս վախտը ինքյը իրան մետք ա անում. «Լավ,—ասում ա,—ասինք, թա էս խուչոցը թալանեցենքյ, էլ խե՞ ընք կտորում, պա մեղքը չը՞ն, սահանք էլ տոն օնին, տեղ, խոխա, ըրախա, կնգա, օղլուշաղու տար ըն, եք պեց թողնիմ, թող քյընան»։

— Հը՛, հի՞նչ ըս մետք անում, ղաչաղ ախպե՛ր,—հրրցրնում ըն էս խոչեքյը։

— Մետք ըմ անում, վրեր ծեզ կտորիմ վրեչ, պեց թողնիմ քյինաք ծեր տները։

Էս խուչեքյն ասում ըն. «Վրեր տու իտի ինսավսով մարթ ըս, քյինի տու, մունք ըստեղ կենանք, մեր խուրչինումը օխտը բուլկի կա, տու օտիս վեչ, վրեր օտիս, կմեռնիս, տեղած ըն։ Քյինա, թա վրեր քու հընդերունքդ կերած ինին, մհենգյ լսի, մեռած կինին, մրեզ դուլյուղ կանիս, մունք կկյանք, թա վրեր կերած չին ինիլ, տու օտիս վեչ»։

Էս մարթը կյամ ա տրեսնում, վրեր բուլկիքյը ղչըղնեն կնրալ ըն, լոխ կտորվալ, մին դոնում թվանգյը տրրքրցնում ա։ Խուչեքյը իմանում ըն, վրեր ղրչրղնեն կտորվալ ըն, կյամ ըն էս թվանգյի սաաավր քրթենում ղաչաղներեն բինան։

— Տու, վրեր իտի մարթ ըս,—ասում ըն խոչեքյը,—մեր էս

ապրանքը քյեզ հալալ, հոթկտորը քյեզ, մեր հորեքյր մըեզ տո մունք քյինանք։

Խանգա ղա·աղն ասում ա. «Չէ՛, ախպեր, էս ձեր հորեքյը, էս ձեր ապրանքը, ձեզ ինի, սրնեցեքյ, քյեցեք ծրզ հետեն։ Ինքյն էլ յոր ա ենում թվանգյը ծառավը տամ, կոտրում, թա. «Ես իստի հա-ցր կերե վէչ, թող աստուծ հինչ օզում ա, անե»։